# ԲԱԺԻՆ 8. ԿՐԹՈՒԹՅՈՒՆՆ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ
# РАЗДЕЛ 8: ОБРАЗОВАНИЕ В ЗАРУБЕЖНЫХ СТРАНАХ
# SECTION 8: EDUCATION IN FOREIGN COUNTRIES

## ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՆԵՐԴՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

**Ալեքսանյան Աննա**
*Երևանի պետական համալսարան,*
*Հայաստան*

**Համառոտ ներածական:** Բարձրագույն կրթության կառավարման ոլորտի արդի մարտահրավերների ժամանակային ու տարածական պայմանավորվածությունները ցույց են տալիս, որ այդ նույն մարտահրավերները հնարավոր է դիմագրավել միասնական լուծումներով, որոնք չեն հակասում կրթության ոլորտի զարգացման միջազգային միտումներին: Կրթության ոլորտի միասնական լուծումների որոնման արդյունավետությունն ապացուցվում է արդեն մեկ տասնամյակ ի վեր, ինչպես նաև պարզ է դառնում, որ միասնականության և միավորման հիմքում կարող են լինել ինչպես տարածական, այնպես էլ տնտեսական, քաղաքական, մշակութային և այլն գործոններ: Հենց նման գործոնների համախումբն էլ ընկած է ԵԱՏՄ ձևավորման հիմում: ԵԱՏՄ անդամ երկրների համագործակցությունը կրթության ոլորտում նոր հեռանկարներ ունի, այդ համագործակցության ոչ բոլոր կողմերն են բացահայտված ու գործող արդի շրջանում:

Առանձնահատուկ նշանակություն ունի ԵԱՏՄ անդամ երկրների տարբեր մշակույթներ ներկայացնող հասարակությունների կրթական ավանդույթների ուսումնասիրությունը և նոր երկխոսությունների ուրվագծումը: Այս տեսանկյունից կարևոր է հատկապես ոչ միայն ՌԴ կրթության ոլորտի ուսումնասիրությունը, որը ՀՀ կրթության ոլորտի համար ամբողջովին բաց է համագործակցության համար, այլև Ղազախստանի կրթության ոլորտի ուսումնասիրությունը, որը կարևոր է նոր կրթամշակութային փոխներգործությունների բացահայտման տեսանկյունից:

**Հիմնախնդիրը:** ԵԱՏՄ անդամ երկրների համագործակցությունը դեռևս վերջնական հաջողությունների չի հասել կրթության ոլորտում, ինչի համար անհրաժեշտ են նոր հետազոտություններ:

Եթե առավել հստակ են ՀՀ և ՌԴ համագործակցության շրջանակները, դրանց հիմքում ընկած գործոններն ու հեռանկարները, ապա նույնը դժվար է ասել Ղազախստանի պարագայում: Որպես ԵԱՏՄ անդամ երկրներ, բացի մասնավոր համագործակցության օրինակներից կրթության ոլորտում, բարձրագույն կրթության կառավարման ոլորտում դեռևս ընդլայնված ու հստակեցված չեն համագործակցության ուղիները մասնավորապես Ղազախստանի և ՀՀ-ի միջև:

Սույն հետազոտությունը միտված է նպաստելու ԵԱՏՄ անդամ երկրների կրթության կառավարման ոլորտում համագործակցության ուղիների որոնմանը:

**Հիմնախնդրին առնչվող արդիական այլ հետազոտությունների և հրատարակությունների կարճ վերլուծություն:** Կրթության կառավարման, կրթության միասնական տարածքների վերաբերյալ կան ուսումնասիրություններ, որոնք վերաբերում են ոչ այնքան հետխորհրդային երկրներին, որքան եվրոպական փորձին: Այսպես՝ կան բազմաբովանդակ հետազոտություններ եվրոպական բարձրագույն կրթական տարածքի մասին [5]: Կան հետազոտություններ, որոնք առնչվում են ոչ թե կոնկրետ ԵԱՏՄ անդամ երկրների կրթության համակարգերի կառավարման համեմատական վերլուծություններին, այլ դրանց տարբեր կողմերին: Այսպես, կան հետազոտություններ, որոնք վեր են հանում համալսարանական կրթության առանձնահատկությունները [3] և դրա արդիականացման խնդիրները [2]:

**Հոդվածի նպատակը:** Սույն հետազոտության նպատակն է վեր հանել ԵԱՏՄ անդամ երկրներից Ղազախստանի բարձրագույն կրթության ոլորտի ներդրվածության ցուցանիշների առանձնահատկությունները հատուկ մշակված մեթոդաբանությամբ:

**Հետազոտության նորույթը:** Հետազոտության շրջանակներում մշակվել և ներկայացվել է ԵԱՏՄ անդամ երկրներից բարձրագույն կրթության համակարգերի համեմատական վերլուծության նոր մեթոդաբանություն, և դրա շրջանակներում առաջին անգամ դուրս են բերվել ցուցանիշներ, որոնց շնորհիվ հնարավոր է դառնում ոչ միայն փաստարկել, այլև գնահատել և վերլուծել կրթության ոլորտի կառավարման առանձնահատկությունները:

***Բանալի բառեր:*** *Բարձրագույն կրթություն, կրթության կառավարում, ԵԱՏՄ անդամ երկրներ, Ղազախստանի կրթության համակարգ, ներդրվածության ցուցանիշներ, կրթության զարգացում:*

**Հիմնական նյութի շարադրանքը:** Կրթության ոլորտի ներկայացվածությունը հասարակություն-պետություն-կառավարում հարաբերություններում և այդ

ներկայացվածության ցուցանիշները բավականին հարուստ տեղեկատվություն են պարունակում տվյալ կրթության համակարգի և դրա կառավարման առանձնահատկությունների վերաբերյալ: Այսպես, կրթական գործոնների ինդեքսները ներառվում և առանձին բաղադրիչ են կազմում կոնկրետ երկրների ժողովրդավարության մակարդակի որոշման ինդեքսներում՝ առողջապահական, տնտեսական, սոցիալական և քաղաքական գործոնների համեմատությամբ [1, էջ 18]: Իսկ կրթական գործոններն իրենց հերթին ձևավորվում են մարդկային զարգացման ինդեքսի կրթության բաղադրիչով (ՄԶԻ-կրթ.) և պետության կողմից արվող կրթական ծախսերով (ԿԾ): Այդ է պատճառը, որ կրթության կառավարման առանձնահատկությունների ուսումնասիրության տեսանկյունից կարևոր նշանակություն ունի դրանում մարդկանց ներգրավվածության մակարդակի, ինչպես նաև կրթության ոլորտում ներդրվածության մակարդակի ուսումնասիրությունը: Սակայն միայն այդ երկու բաղադրիչների ուսումնասիրությունը պատկերը ամբողջական չի դարձնում, քանի որ կարևոր է ոչ միայն պարզապես մարդկանց ներգրավվածությունը կրթության ոլորտում, այլև այդ ներգրավվածության որակը և արդյունքը, որոնք էլ միասին ստեղծում են կրթության ոլորտի ազդեցության ցուցանիշները:

Այսպիսով՝ կարող ենք փաստել, որ բարձրագույն կրթության ոլորտի կառավարման առանձնահատկությունների ուսումնասիրության մեթոդաբանական հիմքերում առանձնանում են ***ներդրվածության*** և ***ազդեցության*** ցուցանիշները:

**Ղազախստանի բարձրագույն կրթության ոլորտի ներդրվածության ցուցանիշները:** Ներդրվածության ցուցանիշների ենթաբաղադրիչային մակարդակում մեթոդաբանության մշակման ժամանակ առանձնացրել ենք հետևյալ ենթաբաղադրիչները.

- *Ղազախստանի բուհերի սովորողների թվային ցուցանիշները,*
- *բուհում կրթական ծառայությունների մատուցումն ապահովող անձնակազմի ցուցանիշները,*
- *բուհի նյութատեխնիկական ռեսուրսների բազային ցուցանիշները,*
- *բուհերում իրականացվող կրթական ծրագրերի ցուցանիշները:*

Այս բոլոր ենթաբաղադրիչային ցուցանիշների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Ղազախստանն ունի ներդրվածության ցուցանիշի բարձր մակարդակ և բարձրագույն կրթության կառավարման զարգացած համակարգ:

Այսպես, *Ղազախստանի կրթական գործոնի ինդեքսը*, որը փոխկապակցված է ***մարդկային զարգացման ինդեքսի հետ*** (ՄԶԻ), դիտարկվող տարիներին ունեցել է այսպիսի պատկեր. 2015 թ.՝ 0.806, 2016 թ.՝ 0.808, 2017 թ.՝ 0.813,

2018 թ.՝ 0.817 [4]: Համեմատելով այլ տարիների հետ՝ տեսնում ենք, որ Ղազախստանը գնալով բարելավում է իր դիրքերը, այսպես՝ 1995 թ. ՄԶԻ-ն եղել է 0.664 [Գծապատկեր 1]:

*Գծապատկեր 1:*

**Ղազախստանում մարդկային զարգացման ինդեքսի դինամիկան [4]:**




Ղազախստանը 2018 թ. դրությամբ զբաղեցնում է 50-րդ տեղը, և եթե համեմատենք դիտարկվող երկրների հետ, ապա այն հաջորդում է անմիջապես ՌԴ-ին, որը 49-րդն է, և կիսում է 50-րդ տեղը Բելառուսի հետ՝ առաջ անցնելով Հայաստանից (81-րդ) [Գծապատկեր 2]:

*Գծապատկեր 2:*

Ղազախստանի դիրքերը աշխարհի այլ երկրների համեմատությամբ [4]:




Կրթական գործոնի ինդեքսը դիտարկվող տարիների համար նույնպես գրանցել է աճ [4]:

Պետության կողմից ֆինանսական ներդրումները կամ ***կրթական ծախսերը*** կազմում են Ղազախստանի հանրապետության ՀՆԱ հետևյալ տոկոսները. 2015 թ.՝ 2.8 %, 2016 թ.՝ 3.0 %, 2017 թ.՝ 2.9 %, 2018 թ. տվյալները դեռ չկան: Համեմատության համար նշենք, որ Բելառուսի հանրապետությունում հետևյալ պատկերն է. 2015 թ.՝ 4.8 %, 2016 թ.՝ 4.9%, 2017 թ.՝ 4.8 %, 2018 թ. տվյալները դեռ չկան: ՀՀ-ում ԿԾ-ն կազմել է ՀՆԱ 2.8 %-ը և՛ 2015-ին, և՛ 2016-ին, իսկ 2017 և 2018 թվականների տվյալները բացակայում են: ՌԴ-ում ԿԾ-ն կազմել է ՀՆԱ 3.8 % 2015 թ., իսկ դրանից հետո տվյալներ ներկայացված չեն: Այսինքն՝ ԿԾ մասով Բելառուսն է գերազանցում՝ առաջ անցնելով անգամ ՌԴ-ին, որտեղ անհամեմատ ավելի բարձր է բուհերի և ուսանողության թիվը:

Համեմատելով Ղազախստանի ներկա ցուցանիշները 1995 թ. տվյալների հետ՝ տեսնում ենք, որ Ղազախստանի ներդրումները պակասել են, օրինակ՝

1995 թ. կազմել է 4 %: Սակայն ուսումնասիրելով նաև վիճակագրական տվյալները՝ տեսնում ենք, որ կրճատվել է բուհերի քանակը, և աճել է պետական բյուջեն:

Ընդհանուր պատկերը ցույց է տալիս, որ Ղազախստանում առանձնահատուկ զարգացում է ապրում կրթության ոլորտը, որն էլ իր հերթին նպաստում է երկրում հասարակության զարգացմանը [Գծապատկեր 3]:

*Գծապատկեր 3:*

**1990-2018 թթ. Ղազախստանի ՄԶԻ բաղադրիչի ինդեքսների միտումները:**




Խոսուն են նաև բուհերում *սովորողների ընդգրկվածության թվերը*, այսպես՝ 2013-2018 թթ. տվյալներով 1000 մարդու կտրվածքով երիտասարդների 53 %-ը ուսանող է դառնում և ընդգրկված է բուհերում [4]: Համեմատության մեջ հարկ է նշել, որ ՀՀ-ում ընդգրկվածությունը 52 % է, ՌԴ-ում՝ 82 %, Բելառուսում՝ 82 %:

Ամփոփելով վերլուծությունը և կատարած հետազոտությունները՝ կարևոր է նշել, որ ՄԶԻ ցուցանիշների սանդղակում ՌԴ-ն զբաղեցնում է 49-րդ, Բելառուսը՝ 50-րդ, Ղազախստանը՝ 51-րդ, իսկ ՀՀ-ն՝ 81-րդ տեղը: Դա նշանակում է, որ համագործակցությունը ԵԱՏՄ անդամ երկրներում և հատկապես կրթության ոլորտում անհրաժեշտություն է և բխում է համատեղ արդյունավետ զարգացման հրամայականից:

**Եզրակացություններ, հետագա հետազոտական հեռանկարներ, առաջարկություններ:** Կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Ղազախստանի բարձրագույն կրթության ներգրավվածության ցուցանիշները համեմատաբար բարձր են, ինչը պարզ է դառնում ՄԶԻ և ԿԾ համեմատական վերլուծությունների արդյունքում:

**Օգտագործված գրականության ցանկ**


1. Ժողովրդավարության մակարդակի ինդեքսի համեմատական վերլուծություն. Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Բելառուս, Ղազախստան, Ուկրաինա, Մոլդովա: Խմբ. Ա. Ալեքսանյան, ԵՊՀ հրատ., Երևան, 2015:
2. Модернизация системы высшего образования Армении в контексте интеграционных процессов. // Монография. Под редакцией Аветисяна П. С., Заславской М. И., Издательство РАУ, 2017.
3. Университеты в евразийском образовательном пространстве/ ред. кол.: Садовничий В. А., М.: Изд.-во Московского университета; Макс пресс, 2017, 392 с.
4. Human Development Data (1990-2018) http://hdr.undp.org/en/data (10.04.2020).
5. The European Higher Education Area: Between Crtitical Reflections and Future Policies. Edited by Curaj A., Liviu M. and others, Part 1 and Part 2, Springer Open, 2015.


## АНАЛИЗ ПОКАЗАТЕЛЕЙ ВВОДА СФЕРЫ ВЫСШЕГО ОБРАЗОВАНИЯ КАЗАХСТАНА


**Алексанян Анна**

*Ереванский государственный университет,*

*Армения*



**Аннотация**

Временное и пространственное распределение текущих вызовов в области управления высшим образованием показывает, что эти вызовы могут быть решены совместными усилиями, которые не противоречат международным тенденциям развития сектора образования. Эффективность поиска общих решений в области образования доказывалась на протяжении десятилетия, поскольку также становится ясно, что пространственные, экономические, политические, культурные и другие факторы могут быть основой единства. Именно этот комплекс факторов лежит в основе формирования ЕАЭС. Сотрудничество государств-членов ЕАЭС в области образования имеет новые перспективы - не все аспекты этого сотрудничества выявлены и действуют в текущий период.

Особое значение имеет изучение образовательных традиций обществ, представляющих разные культуры государств-членов ЕАЭС, контуры новых диалогов. С этой точки зрения особенно важно не только изучение российского сектора образования, которое полностью открыто для сотрудничества в армянском секторе образования, но и изучение казахстан-

ского опыта образования, которое возможно с точки зрения выявления новых образовательных и культурных взаимодействий.

Сотрудничество стран-членов ЕАЭС пока не достигло окончательных успехов в сфере образования, что требует новых исследований.

Если объем сотрудничества между Арменией и Россией, лежащие в основе факторы и перспективы более ясны, то же самое трудно сказать о Казахстане. Как государства-члены ЕАЭС, помимо примеров частного сотрудничества в области образования, пути сотрудничества в области управления высшим образованием не были расширены и уточнены, особенно между Казахстаном и Арменией.

Данное исследование направлено на содействие поиску сотрудничества в области управления образованием в странах-членах ЕАЭС.

Целью исследования является выявление специфики показателей ввода казахстанского высшего образования из стран-членов ЕАЭС с использованием специально разработанной методики.

В рамках исследования была разработана новая методология сравнительного анализа систем высшего образования стран-участниц ЕАЭС, в рамках которой впервые были выработаны индикаторы, благодаря которым можно оценить и проанализировать особенности управления образованием.

**Ключевые слова:** Высшее образование, менеджмент образования, государства-члены ЕАЭС, система образования Казахстана, показатели ввода, развитие образования.

## ANALYSIS OF INPUT INDICATORS OF THE SPHERE OF HIGHER EDUCATION OF KAZAKHSTAN

**Aleksanyan Anna**
*Yerevan State University,*
*Armenia*

**Summary**

The temporal and spatial distribution of the current challenges in the field of higher education management shows that these same challenges can be solved through joint efforts that do not contradict international trends in the development of the education sector. The effectiveness of the search for common solutions in the field of education has been proven over the course of a decade, as it also becomes clear that spatial, economic, political, cultural and other factors can be the basis of unity. It is this complex of factors that underlies the formation of the EAEU. Cooperation of the EAEU member states in the field of education has new prospects - not all aspects of this cooperation have been identified and are operating in the current period.

Of particular importance is the study of the educational traditions of societies representing different cultures of the EAEU member states, the contours of new dialogues. From this point of view, it is especially important not only to study the Russian education sector, which is completely open for cooperation in the Armenian education sector, but also to study the Kazakhstani education experience, which is possible in terms of identifying new educational and cultural interactions.

Cooperation between the EAEU member states has not yet achieved final success in the field of education, which requires new research.

If the volume of cooperation between Armenia and Russia, the underlying factors and perspectives are clearer, the same is difficult to say about Kazakhstan. As EAEU member states, apart from examples of private cooperation in the field of education, the ways of cooperation in the field of higher education management have not been expanded and clarified, especially between Kazakhstan and Armenia.

This study aims to facilitate the search for cooperation in the field of education management in the EAEU member states.

The purpose of the study is to identify the specifics of the indicators of the input of Kazakhstani higher education from the EAEU member states using a specially developed methodology.

As part of the study, a new methodology for the comparative analysis of the higher education systems of the EAEU member states was developed, within the framework of which indicators were developed for the first time, thanks to which it is possible to evaluate and analyze the features of education management.

**Keywords:** Higher education, education management, EAEU member states, the education system of Kazakhstan, input indicators, education development.

**References:**

1. Comparative analysis of the level of democracy index. Armenia, Georgia, Azerbaijan, Belarus, Kazakhstan, Ukraine, Moldova. Ed. A. Aleksanyan, YSU Publishing House, Yerevan, 2015.
2. Modernization of the higher education system of Armenia in the context of integration processes. // Monograph. Edited by Avetisyan P.S., Zaslavskaya M.I., RAU Publishing House, 2017.
3. Universities in the Eurasian educational space / ed. number: Sadovnichy V. A., M .: Publishing house of Moscow University; Max Press, 2017, 392p.
4. Human Development Data (1990-2018) http://hdr.undp.org/en/data (10.09.2020).
5. The European Higher Education Area: Between Critical Reflections and Future Policies. Edited by Curaj A., Liviu M. and others, Part 1 and Part 2, Springer Open, 2015.

*Материал был представлен и отправлен на рецензию: 26.09.2020*
*Принято к публикации: 05.10.2020*
*Рецензент: канд.пед. наук, доцент Грета Акопян*

*The material was submitted and sent to review: 26.09.2020*
*Was accepted for publication: 05.10.2020*
*Reviewer: Assoc. Prof., PhD Greta Hakobyan*